



տր թէ "Մեր Հոգեւոր Ուսումնարանում ոչինչ չեն սովորցնում", և թէ մինչև հիմայ այն տեղից մի օրինաւոր ուսումն առած աշակերտ չի դուրս եկել": Այս թէպէտ շատ ծանր է և անխորժ բերեաց, բայց ինչպէս յիշեցնէք, իրաւացի դանդաղ է և երանի՜ թէ միշտ պարապած լինի Երևանայ արթուն ժողովուրդը ուսման և ուսումնարանի վերաբերեալ խորհուրդներով, եղ մասին մեր կողմից խորին շնորհակալութիւն մատուցանելով այնպիսեաց՝ կասենք, որ զա մի գովութեան արժանի արելու նպատակ է՝ և առաջին իսկ խնդիրը Ազգային յառաջդիմութեան. բայց մի և նոյն ժամանակը ներդրութիւն խնդրելով այնպէս ներկից, ցաւօք սրտի էս էլ կ'աւելացնենք թէ՝ առանց արգելամիջ հոգացողութեան՝ միայն լոկ խօսակցութեամբ բաւականաւոր՝ աւելի բամբասանք կարող է համարուիլ, որ բաց ՚ի վնասից ու անուանաբերութիւններից՝ մի ուրիշ օգուտ ու պատիւ չէ բերել ցարդ, ու չի բերիլ այսուհետեւ աղքատ ուսումնարանին. կարծես այս մի և նոյնը կ'լինի՝ որ հարուստ մէկը չքաւորին կարեկցութիւն ցոյց տալուց յետոյ, դեռ նորա երեսով տայ չքաւորութիւնը՝ ինչպէս մի յանցանք, ու ծիծաղի վրէն, որ նա չի կարողանում ապրել այնպէս՝ ինչպէս ինքը: Այ՛, ում մի բան չի տուել, նորանից չպէտք է պահանջել: Եթէ ուսման յարգը և արժէքը ճանաչող ժողովուրդը մեծ յուսով սպասում է, կամ լաւ ևս ասել՝ պահանջում է բարձր ուսմունք իւր ուսումնարանից, նախ և յառաջ՝ օգնութեան ձեռք մեկնելով՝ պէտք է նորան նիւթական կորմանէ ապահովացնէ, իւր անդադար աջակցութիւնով նորա ցաւօք դարման և հոգ տանէ, որից թէ միշտ հեռու է մնացել սառած սրբտով՝ կ'իստատովանէք և՛ դուք:

Քանի որ մենք տեսնում ենք այս տեղ միայն Ս. Էջմիածնայ Աթոռից նուիրած տարեկան մի հազար և երկու հարիւր մանէթի չափի դրամական օժանդակութիւնը՝ ի կառավարութիւն ուսումնարանին, երբէք խօսք չենք կարող տալ՝ թէ ուսումնարանը կարող է սորանից աւելի լաւ փիճակի հասնել. ամենէին խաբարայութիւն արած կը լինի՝ թէ որ մէկը խօսք տալու լինի. Մենք այս գումարով փոխանակ 150 աշակերտի՝ կարող ենք միայն 15 կամ 20 հատ եկեղեցականներ պատրաստելու, և այն ըստ ամենայնի անտէրունջ, չքաւոր, և որը երեխաներից: Ամենքդ էլ կ'վկայէք, որ ուսումնարանը ուրիշ հաստատ աղբիւր չունի բաց ի այս փոքրիկ գումարը, որից աւելի տալ չի կարող Ս. Աթոռը. եթէ ժողովուրդը տարեկան երկու կամ երեք այսքան չ'հասցնի, ուսումնարանը իւր նպատակին չէ հասնելու՝ յայտնապէս ասում ենք, որ դարձեալ մի և նոյն 150 կամ 200 մանէթից վարժապետները կ'լինին, մի և նոյն բնթացքը ուսման, և մի և նոյն բամբասանքը ժողովուրդի, որը անշուշտ պէտք է կարծուի ժողովուրդ ասելով մենք ՚ի հարկէ ուսումնարա-

նումն որդի ունեցողները և չունեցողները միասին ենք հասկանում. բայց մինչև հիմայ մեր այսպէս հասկանալը ոչինչ օգուտ չ'բերեց, արդէն ամենիդ յայտնի է որ քանիցս անգամ էս մասին հրաւերներ և ժողովներ են եղած, և ամեն տեսակ յոյսեր ու մեծ մեծ խոստումներն նոյն ժողովարանումն են մնացած, ինչպէս մի աներևոյթ պատկեր անմուռանալի յիշատակի մեծապատիւ պարտնայց: Այսուհետեւ մենք ուսումնարանի հաստատուն ու մշտապէս աղբիւրը ճանաչելու ենք նոյն իսկ ուսանողաց ծնողքներին կամ բարեկամներին, որոց տարեկան առատ թոշակով պէտք է բարւոքութիւնը ներքին և արտաքին կառավարութիւնը, և որոնք այն ժամանակ միայն պահանջել կարող են իրաւամբ այն կանոնաւոր ուսումը, ինչ որ առանց իրաւանց խնդրում էի մինչև օրս. իսկ նոքա՛ որոնք որդւոց կամ ուղեղից տէր չեն, մի՞թէ մեր առաջարկութեանը պէտք է սպասեն, եթէ արգարե կ'ունենան սիրտ՝ մի որ և իցէ միջոցաւ իրանց ուսումնարանին օգուտներ հասցնելու, ինչպէս մի և նոյն ազգի անդամք խտրութիւն չառնելով թէ՛ նա ունի որդի՛ ես չունիմ, ի՛նչ պարտական եմ. ահա՛ հենց այս է, որ մեր ազգի վիճակը ամեն տեղ ողբալի փիճակի և դրութեան մեջ է մնացել. ինչ և իցէ՛ աւելորդ է օրիշ տեղերից օրինակ բերել՝ քանի որ մենք աւելի ցաւալի օրինակը մեր աչքի առաջն ունինք, և այս օրինակը աչքի առաջից կամ պէտք է խսկաւ հեռացնել, որը աւելի սիրտ տխրացնող է՝ քան մի-խիթարող, նախատինք է՝ քան թէ պարծանք, և կամ ջանալ այնպէս նախաձեռնել կացուցանել բոլոր տեսանողներից, որին փոխանակ բամբասել յանդգնելու այնուհետեւ՝ զօրութեամբ հանդերձ հետևող լինին շատերը. ինչպէս էս երկուսից մէկը ընտրելը միտնգամայն ձեր ձեռքն է, նոյնպէս պատիւը և անարդանքը, օգուտը և վնասը՝ ձերն է, ո՞րը կամենաք՝ կարող էք ընդունել, Հատ հեռու չ'գնանք՝ կ'տեսնենք մեզից մօտիկ վերին Ագուլնաց երկու սեղից ընդ ամենը երեք տարուան նորարաց ուսումնարանները, որ ունին այժմ 30000 մանէթի մօտ պատրաստի դրամագումար, Հոգաբարձութիւն, վերատեսուչ, ուսնալ վարժապետներ ևն. ինչպէս ամեն մէկը ձեզից, եթէ ուղենայ կարող է տեղեկանայ 1868 թուականի մէջ ՚ի Մոսկուայ տպագրութեամբ հրատարակուած նոյն իսկ ուսումնարանաց կանոնագրութիւններից, ՚ի հարկէ՝ որ նոքա իրաւունք ու ձայն կ'ունենան և նրանց գործը լաւ յառաջ կ'երթայ, ու մերը միշտ յետ կ'մնայ՝ և ձայն չենք ունենալ յոյսանալէս խօսելու. քանի որ մենք էլ մեր կարողութեան չափ ձեռք չենք տալ կենդանացնելու մեր դպրոցը մի նշանաւոր դրամապետով: Արեւմտ շատ չ'երկարացնելով բանը՝ մեր վախճանական խնդիրը քան թէ առաջարկութիւնը դէպ ՚ի ձեզ՝ այն է՝ որ դուք ինչպէս հայր որդոց՝ առանց սպասելու ուրիշների օգնութեանը՝ աշխատէք ձեր սեփական

վաստակը դորձ դնելով՝ անխնայ յառաջ տանել ձեր զաւակները բարոյական և մտաւորական կրթութեան մէջ. դուք եւ ուրիշները յետոյ կ'օրհնեն, բայց մինչեւ նորանց օգնելը դուք կ'կորցնէք ձեր զաւակներին լաւ դաստիարակուելու գեղեցիկ օրերը, ոսկի ժամանակները, որը կրկին ձեռք բերելը ամենեւին անկարելի է: Մի սեպուհ պարտաւորութեան տակից դուրս գալու համար՝ մեր կողմից այսպէս խորհուրդ տալով՝ յարգելի ժողովոյդ՝ կառավարիչներ այս տեղ նոր ի նորոյ աշակերտներ ընդունելու համար մի քանի յօդուածներ յատկապէս նրանց յառաջադէմ կացուցանելու՝ և դպրոցի փառք ու պատիւը բարձրացնելու՝ ազատելով նորան այդին չմշակող, ու միայն հեռու կանգնած պտուղ պահանջող մարդկանց նրման տրտունջ բարձրելից:

## ՅՈՒՈՒԱԾՆԵՐԸ ՍՐԱՆՔԵՆ

- 1) Դպրոցի մէջ կուսանին թոշակատու և ձրիավարժ աշակերտը:
- 2) Իւրաքանչիւր աշակերտի տարեկան թոշակը կ'լինի երեսուն, քսան և տասն մանէթ՝ առաջին, երկրորդ և երրորդ կարգի կարողութեան տէր մարդերից, և այն կ'ստացուի տարին երկու անգամ:
- 3) Զրիավարժների թիւը քսանից չի պէտք է աւելանայ, որոնք կ'լինին վկայեալ աղքատ և որը երեսնանրից:
- 4) Իոյր աշակերտը կ'ընդունուին խնդրագրութեամբ, որ կ'լինի Փոխանորդի անունով, թոշակատուքը վեց ամսուանը կանխիկ վճարելով:
- 5) Աշակերտները կ'ընդունուին դպրոցը ութ տարեկանից մինչև տասնեակեր, իսկ հասակով մեծերը ուսուցչաց քննութեան յարմար դատելուց յետոյ՝ կարող են ընդունուիլ վերին դասատուն:
- 6) Եթէ մի աշակերտ ծուլութեան պատճառաւ չ'կարողանայ փոխել դնէ երկու տարին մի դասատուն, կարտաքսուի դպրոցից զբունելով տուած թոշակագրամից:
- 7) Իոյր աշակերտը ուսման ժամանակ պէտք է ներկայ գտնուին դպրոցում. ոչինչ պատճառ օրինաւոր չի կարող համարուիլ՝ բաց ի հիւանդութիւնը, և այն ծնողք կամ ազգականք պարտաւոր են յայտնել վերակացուն առաջին օրից:
- 8) Ծնողք բաց ի հեռաւոր քաղաք ուղարկելուց՝ ուրիշ պատճառաւ չ'պէտք է հանեն իրանց որդիքը դպրոցից՝ ուսման ընթացքը չ'աւարտած. իսկ եթէ մէկը վեց ամսով կամ մի տարով է ուղւում իւր որդին թողնել՝ ևս ոչինչ չ'է գրել իմանալու համար, կարող է ուրիշ մասնաւոր տեղեւում ձեռք բերել ուղած գիտութիւնը՝ չ'գիտելով Հոգեւոր Դպրոցի պատուին:

- 9) Աշակերտաց ընդունելութիւնը տարին միանգամ կ'լինի՝ սկսած օգոստոսի քսանից մինչև սեպտեմբերի տասը:
- 10) Ուսումից ազատ օրերը յայտնուած են դպրոցի կանոնադրութեան մէջ. այն տեղ կարելի է տեսնել նոյնպէս ուսանելի առարկաները, որն որ տպուած է Արարատ ամսագրի մէջ:
- 11) Տարին միանգամ հրապարակական հարցաքննութիւնից յետոյ՝ արժանաւորքը կ'փոխադրուին վերին դասատուն:
- 12) Դասատան գրքերը ուսուցչաց ընտրութեամբ կ'ստանայ ուսումնարանը և այն տեղից կ'վաճառուի աշակերտաց՝ մանէթին 10 կուպէկ դպրոցի օգուտը պահպանել:
- 13) Հարաւոր միանգամ ուսուցչական ժողով կ'լինի դպրոցի մի օրոշ սենեակում. դասախօսութեան առարկաների վերայ խորհուրդ առնելու համար Փոխ. - Թեմակալի նախագահութեամբ:
- 14) Ուսման ընթացքը աւարտող աշակերտները կարճալուին օրինաւոր վկայագրութեամբ դպրոցի կնքով գրօջմամբ:
- 15) Մէկ ծնող կամ ազգական՝ որ կամենայ առանց զօրաւոր պատճառի մի աշակերտի ուսման ընթացքը չ'աւարտած հանել դպրոցից՝ ուրիշ դպրոց տալ, և կամ ուրիշ արհեստի, պարտական է տուգանք տալ դպրոցին այնքան դրամ, որքան այն աշակերտի մի տարեկան թոշակագրամն է:

## Գ. Ա. Շ. Ա. Ն. Յ. Թ. Ո. Ի. Դ. Թ.

Ի թղթին դաշանց գրի, "Աւա ևս առաւել ընծայեցաք ընծայս բաղումն ընծանեաց սուրբ Աստուածածնին և Վարազայ վերնակրօն եղբարցն և սուրբ Հօրն Ղևոնդեայ": Ըստ միաձայն պատմութեան Հայոց՝ խաչն Վարազայ գտեալ եղև ի 653 ամի Տեառն, ուր և շինեցաւ Վանք մեծ և եկեղեցի. և չէ՞ արդեօք հակառակ ամենայն ճշմարտութեան՝ ընծայիլ ուխտին ընծայս ի սկիզբն չորրորդի դարուն, որ զգոյութիւնն կամ զհաստատութիւնն ընկալաւ երեք և կէս դարուք զինի:

Թողից զայլ ամենայն այլանդակութիւնս շարագրածոյ և ոճոյ թղթոյն դա-